

ՀՈՎՀԱՆՆԵՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ. Ղարաղաղի հայերը. ազգագրական և բանահյուսական ժառանգություն. *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, հ. I, 502 էջ, հ. II, 643 էջ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահպանվում են Պատմական Հայաստանի ամենատարբեր տեղավայրերին՝ Մոկս, Տարոն, Համշեն, Վասպուրական, Պարսկահայք, Տավուշ, Լոռի, Շիրակ և ազգագրական այլ շրջաններին վերաբերող նյութական ու հոգևոր մշակութային արժեքավոր սկզբնաղբյուրներ, որոնք կարոտ են հրատարակության:

Բարեբախտաբար, ինստիտուտի գիտաշխատողների ջանքերով վերջերս կյանքի է կոչվել դրանցից մեկը՝ Հովհ. Հովսեփյանի «Ղարաղաղի հայերը» երկհատորանոց աշխատությունը՝ շքեղ կազմով և հարուստ բովանդակությամբ:

Առաջին հատորն ընդգրկում է բանահավաք Հովհ. Հովսեփյանի գրառած Ղարաղաղի հայերի ազգագրությանը վերաբերող նյութերը (հրատարակության է պատրաստել և խմբագրել՝ պ. գ. թ. Մուրեն Հոբոսյանը): Երկրորդ հատորը պարունակում է նույն բանահավաքի գրառած Ղարաղաղի հայերի ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերին պատկանող ստեղծագործություններ (հրատարակության են պատրաստել և առաջաբանը գրել բ. գ. թ. Սվետլանա Վարդանյանը, բանագետ Էսթեր Խեմչյանը, պատասխանատու խմբագիրն է բ. գ. թ. Ալվարդ Ղազիյանը): Գրքի հրատարակության նախաձեռնողը Հովհ. Հովսեփյանի որդին է՝ Հայրենիք (Մայիս) Հովսեփյանը, որին հնարավորինս աջակցել են ԱՄՆ-ում բնակվող բնիկ ղարաղաղացիներ Ալբրիկ Պետրիկը և Ռազմիկ Հովսեփյանը:

Ղարաղաղը գտնվում է Ատրպատական նահանգի հյուսիսային տարածքում և հնում եղել է ամենահայաշատ գավառներից մեկը: Պարսպատունիքը նշված է Հայկական (Ղարաղաղ) լեռներ անվամբ¹: Հետագայում պարսիկները Պարսպատունիքի Հայկական

լեռներն անվանեցին Սիա-Կուհ, որ նշանակում է Սև սար, թուրքերն էլ իրենց լեզվով թարգմանեցին այն՝ դարձնելով Ղարաղաղ: Եվ այսպես, Պարսպատունիք տեղանունը վերափոխվեց ու մնաց Ղարաղաղ²:

Բանահավաք Հովհաննես Հարությունի Հովսեփյանը ծնվել է 1921 թ. Իրանի Ղարաղաղ գավառի Դիզմար գավառակի Խանազահ գյուղում: Հայրը հողագործ գյուղացի էր և գավառում ճանաչված գուռնաչի, ում հետ նա հաճախակի ճամփորդում էր հեռավոր գյուղեր, ծանոթանում խոսքաշեն մարդկանց և վարպետ ասացողների հետ: Ձմռան երկար գիշերներին նա համակ ուշադրությամբ լսում էր Պետրոս պապի պատմած հեքիաթները: Գավառի գյուղերի կառուցման, սրբավայրերի, ուխտագնացության, տոների, ավանդությունների մասին զարմանալի իմացություններ ուներ նաև հորական տատը:

Պատմությունը մեզ ժխտ տեղեկություններ է թողել, թե պարսպատունցիներն ինչպիսի անուններ են տվել իրենց երկրի առանձին լեռնագագաթներին, գետակներին, հովիտներին ու բնակավայրերին: Լինելով իր ապուպապերից ավանդված հոգևոր արժեքների կրողը՝ Հովհ. Հովսեփյանը պատանեկան տարիներին մեծ հետաքրքրություն է դրսևորել բանահյուսության նկատմամբ ու իր պարտքն է համարել այդ ամենը գրառել, ընթերցողին ներկայացնել այնպես, ինչպես տեղի հայ և այլազգի բնակիչներն անվանում էին իր բանահավաքչության տարիներին:

1946 թ. օգոստոսին Խանազահ, Ղուլուղի, Սարդու և Իրգուլի գյուղերի հայերի մի մեծ քարավանի հետ՝ որպես քարավանապետ, Հովհ. Հովսեփյանը գաղթում է Խորհրդային Հայաստան: Գաղթի ճանապարհին, դժբախտաբար, կորցնում է իր երկար տարիների աշխատանքի արդյունքը՝ բանահյուսական և ազգագրական նյութերի հավաքածուն: Առաջնորդվելով իր գրառած ժողովրդական ի-

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 12:

² Նույն տեղում, էջ 17:

մաստնությամբ՝ «Բենը որ թողալս կեսաստ արալ չըս՝ երե ձուն կգո» (հ. II, -51 (411), էջ 508), նա գրեթե երեսուն տարի կորցրածը վերականգնելու նպատակով ոչ մի կիրակի օր կամ արձակուրդի ժամանակ չի հանգստացել: Բազմիցս մեկնել է Բաքու, Ղափան, Գորիս, Չարենցավան, Աբովյան, Էջմիածին և այլուր, որտեղ կային Ղարաղաղից գաղթած հայեր ու նրանցից նոր գրառումներ կատարել՝ նպատակին հասնելու համար: Դժվարությունների հաղթահարման ճանապարհին բանահավաքին դարձյալ օգնության ձեռք է մեկնել ժողովրդական առածը՝ «Բենը ինդի կփռնն, որ Աստոծեն ալ խոջը գո» (հ. II, -50 (410), էջ 508): Այսինքն՝ մարդ պետք է այնպիսի գործ բռնի, որ Աստծուն էլ դուր գա:

Անտարակույս, Հովհ. Հովսեփյանն աստվածահաճո գործ էր սկսել և Աստծո կամոք կարողացել այն հասցնել ավարտին: Հովհ. Հովսեփյանը, բանահավաքական աշխատանքից բացի, կատարել է նաև աղբյուրագիտական հետազոտություն: Քանի որ 1970 թ. դրությամբ Ղարաղաղում այլևս հայեր չէին բնակվում, բանահավաքն իր պարտքն է համարել շարադրել դարադառնալից պատմությունը՝ ուսումնասիրելով Մատենադարանում, Հայաստանի ազգային գրադարանում պահվող և խնդրին առնչվող նյութերը:

Հարկ է նկատել, որ սույն աշխատությունը գրված է հայրենասիրական մեծ ներշնչանքով և հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ անհուն մտահոգությամբ, ինչը տեսանելի է նաև բանահավաքի կողմից իր որդիներին [Հաղթանակ, Հայրենիք (Մայիս) և դուստրերին (Հայաստան, Հրազդան)] տրված հայաբաղձ անուններում:

Գրքի I հատորում ընդգրկված ազգագրական նյութերը ներկայացված են հինգ բաժիններով: «Պատմական ակնարկում (էջ 11-59) բանահավաքը ներկայացնում է Ղարաղաղի տեղագրությունը, կլիման, բուսական ու կենդանական աշխարհի նկարագիրը, ընդերքը, բնակչության կազմն ու տեղաշարժը՝ նույն տարածքում ապրող հարևան այլ ազգերի ու ժողովուրդների կյանքի, կենցաղի ու բարքերի համեմատական նկարագրությամբ:

«Ղարաղաղի հայաբնակ գյուղերը» (էջ 60-280) բաժնում ներկայացված են ամենահայաշատ Դիզմար (Օձաբերդ) գավառակը և հեղինակի կատարած ուսումնասիրությունների ժամանակ առկա 27 հայկական գյուղերն ու գյուղատեղերը: Բանահավաքն այս բաժնում անդրադարձել է հիշատակվող գյուղերի պատմությանը, նրանց կառուցմանն ու ավերմանը վերաբերող ավանդություններին, գոյություն ունեցող սրբավայրերին, ուխտատեղիներին և պահպանված այլ մասունքներին: Հատուկ ուշադրություն է դարձված տնտեսական զբաղմունքին (դաշտավարություն, հունձ, փոխօգնություն, խոտհունձ, այգեգործություն, զինեգործություն, անասնապահություն, թռչնապահություն, մեղվապահություն, շերամապահություն, տնայնագործություն, որսորդություն և այլն): Ի դեպ, անդնդախոր ձորերով, լեռներով, անտառներով շրջապատված Ղարաղաղում որսի սիրահար բանահավաքը վերոհիշյալ ոլորտին վերաբերող գրույցների գրառումն իրականացրել է որսորդների միջավայրում: Այս բաժնում տեսանելի է նաև Ղարաղաղի մշակութային, լուսավորական կյանքի պատկերը (Խանազահի եկեղեցին, Ազիզյան-Մնացականյան դպրոցը):

Հաջորդ բաժիններում՝ «Հագուստ և զարդեղեն» (էջ 281-287), «Մննդի համակարգ» (էջ 288-398), «Տոներ» (էջ 399-496) նյութը համակարգված է հայ ազգագրության մեջ ընդունված ավանդական ձևով:

Ղարաղաղի հայերը գրքի I հատորն ավարտվում է Աղաջանյան-Հովսեփյան տոհմաճյուղով, ներկայացված է անգլերեն համառոտ ամփոփում, կցված է Ղարաղաղի հայաբնակ գյուղերի (XX դ. սկիզբ) քարտեզը, ինչպես նաև հավելված՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում պահվող ձեռագիր աշխատությունների վերաբերյալ:

«Ղարաղաղի հայերը» գրքի II հատորը բացվում է կազմողների կողմից տրված հանգամանալից ներածությամբ, նաև Ղարաղաղի բարբառի քերականական առանձնահատկությունների վերաբերյալ հակիրճ տվյալներով, որին հաջորդում է բանահավաքի նախաբանը:

Այս հատորում ընդգրկված բանահյուսական բնագրերը ներկայացված են տասներ-

կու բաժիններով՝ Վիպական բանահյուսություն (Հրաշապատում հեքիաթներ՝ 1-25, Իրապատում հեքիաթներ՝ 1-33, Պատմական անձինք՝ 1-11, Գենդանական հեքիաթներ՝ 1-22, Մանկական հեքիաթներ՝ 1-12, Զրույցներ՝ 1-98, Իրապատում գրույցներ՝ 1-45, Զվարճախոսություններ և զվարճախոսներ՝ 1-86, Ստապատում՝ 1-18, Քնարական բանահյուսություն՝ 1-10, Բանաձևային բանահյուսություն՝ 1-511, Հավելված՝ 1-59): Հատորում ընդգրկված նյութերի ընդհանուր քանակը 865 միավոր է՝ գրառված հիսունհինգ բանասացից:

Բանասացների մասնագիտական կազմը միատարր է, հիմնականում՝ հողագործներ: Բանահյուսական բնագրերի մեծ մասը կազմում են հեքիաթներն ու գրույցները: Ինչպես իրավացիորեն նկատում են ժողովածուն կազմողները, «Հրաշապատում և իրապատում հեքիաթները տեղական տարբերակներ են, բնորոշ՝ ինչպես Հայաստանի պատմագագազրական այլ շրջանների, այնպես էլ՝ այլ ժողովուրդների երկացանկին» (հ. II, էջ 9): Այսինքն՝ հեքիաթները պահպանում են մոտիվների և դիպաշարերի տիպաբանական ընդհանրությունները, որոնց համատեքստում հետագա ուսումնասիրողների համար տեսանելի կլինի ազգային երկացանկի առանձնահատկությունները: Հովհ. Հովսեփյանի գրառած նյութերը մեկ անգամ ևս վկայում են, թե ազգագրությունն ու բանահյուսությունը որքան սերտորեն են կապված միմյանց: Ազգագրական երևույթների նկարագրությանը զուգահեռ նա ներկայացնում է դրանց հետ կապված բանահյուսության նմուշներ (ծիսական ու քնարական երգեր, խաղիկներ): Ծիսական բանահյուսության նմուշներից ուշագրավ է բանահավաքի գրառած «Ճորա-Ճորա» հմայական երգը, որը երկրագործական մշակույթում խաղարկվող փայտածողի վրա լաթեր հագած արցախյան և զանգեզուրյան ծիսական խամաճիկի դարադադյան անվանումն է, տվյալ դեպքում՝ անձրևախափան նշանակությամբ: Ներկա

հատորի մեջ ծավալուն տեղ են գրավում Պըլը Պուդու, Մոլլա Նասրեդինի, Ղարադադի զվարճախոսներ Դովունց Ավու, Ուստա Մուրադի, Մուտասան Մուրու, Պողոզ ապոր շուրջ հորինված զվարճալի պատմությունները: Պատմական անձինք բաժնում դրսևորվել են հայոց վիպական ավանդության մեջ իր ուրույն տեղն ունեցող Սեֆյան դինաստիայի ինքնակալ Շահ-Աբաս առաջինին առնչվող պատումները:

«Ղարադադի հայերը» գրքի II հատորին կից ներկայացված է բանահավաք Հովհաննես Հովսեփյանի համառոտ ինքնակենսագրությունը, բանասացների կենսագրական տվյալները, Ղարադադի հայաբնակ գյուղերը (XX դ. սկիզբ) քարտեզը, բանահյուսական նյութերի ծանոթագրությունների աղյուսակը, ժողովածուում գործածված բարբառային բառերի բացատրական բառարանը, աղբյուրների համառոտագրությունը, ռուսերեն և անգլերեն ամփոփումները:

Ղարադադի հայերը» երկհատոր աշխատությամբ Պատմական Հայաստանի մի հին ու մոռացված գավառի ազգագրությունն ու բանահյուսությունն առաջին անգամ դրվում է գիտական շրջանառության մեջ: Հիրավի, այն կարևոր ներդրում է հայ մշակույթի ուսումնասիրության ոլորտում:

Հատորները կազմված և խմբագրված են մեծ բարեխղճությամբ: Սպորդաձև աննշան վրիպումները չեն կարող նսեմացնել աշխատության անուրանալի արժանիքները: Ցավոք, բանահավաքի մահվան թվականը ժողովածուում նշված չէ: Իբրև Ղարադադի հայերի պատմության, ավանդական սովորությունների, կենցաղի, զբաղմունքների, հավատալիքների, ծեսերի, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի վերաբերյալ առաջին ու ամփոփ երկհատոր համահավաք՝ այն հարգանքի տուրք է իրենց Պատմական հայրենիքը կորցրած աշխարհասփյուռ դարադադադիների ավանդապաշտ նախնիների հիշատակին: